

**ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

*Բանալի քառեր – եղանակ, ժամանակ, կերպ, հաջորդականություն, երկրորդական
բաղադրյալ ժամանակներ, բաղադրյալ ստորոցյալ*

Գրական արևելահայերենի խոնարհման համակարգում ժամանակի քերականական կարգի դրսևորմանն աղբյուրաբանում ենք, քանի որ այստեղ ճշգրտումների կարիք կա: Այդ մասին թռուցիկ ակնարկ կա եղանակի քերականական կարգին նվիրված մեր համահեղինակած հոդվածում¹, այստեղ կփորձենք ավելի մանրամասն ներկայացնել մեր մոտեցումները:

Բանն այն է, որ ժամանակի տրամաբանական և քերականական ըմբռնումները միմյանց չեն կարող հակասել, մինչդեռ «անցյալ(ի) ապառնի», «անցյալի անցյալ» անվանումներն իրոք անհասկանալի են, քանի որ տրամաբանորեն անհնար է պատկերացնել մի գործողություն, որը կատարվել կամ կատարվելու է ն՝ անցյալի, ն՝ ապառնիի տիրույթներում, իսկ «անցյալի անցյալը» ի՞նչ կոնկրետ ժամանակահատված է ընդգրկում, ե՞րբ է տեղի ունեցել գործողությունը, անհնար է պարզել:

Տեղի ունեցող, ունեցած և ունենալիք գործողությունների ժամանակը բնորոշելու նման սկզբունքի պատճառն այն է, որ բայական բառաձևերի հատկապես վերլուծական կառույցները ներկայացնում են որպես երկու տարբեր ինքնուրույն միավորների գումարից առաջացած բայաձև՝ կախյալ դերբայ գումարած օժանդակ բայ, ընդ որում վերջինիս անցյալով կազմությունները՝ որպես հարաբերական ժամանակաձևեր, որոնք հարաբերվում են ինչ-որ ժամանակակետի:

Գրական արևելահայերենի նորմատիվ քերականության հեղինակը՝ Մ. Ասատրյանը, հենվում է Է. Աղայանի տեսակետի վրա, երբ ներկայացնում է ժամանակի քերականական կարգը, ուստի հարկ ենք համարում այստեղ անդրադառնալ հենց Է. Աղայանի դրույթներին:

Ըստ Է. Աղայանի՝ խոնարհման հարացույց կազմում են «կերպային դերբայները». «...կարդում, կարդացել, կարդալու, կարդա ձևերը արտահայտում են գործողության ընթացքը, այլ կերպ ասած՝ կերպային հարաբերություն են

¹ Տե՛ս **Ներսիսյան Բ., Ավետիսյան Ռ.**, Եղանակի քերականական կարգը գրական արևելահայերենում // «Բանբեր հայագիտության», 2017, թիվ 2, էջ 209-223:

արտահայտում... Անկատար, վաղակատար և ապառնի դերբայները եռակի հակադրություն են կազմում կատարվող, կատարյալ, կատարելի կերպային իմաստներով և, օժանդակ բային միանալով, արտահայտում են այդ կերպերի ու տվյալ ժամանակի հարաբերությունը»¹:

Այնուհետև. «Հակադրությունների այդ համակարգից դուրս է մնում անցյալ կատարյալը, որը ցույց է տալիս կատարյալ (ավարտված) գործողություն անցյալ ժամանակում. ըստ գործողության վիճակի անցյալ կատարյալն, ուրեմն, համընկնում է կատարյալի կերպի հետ. բայց վերի եռակի հակադրության մեջ բացի գործողության վիճակից (կերպից) կա նաև մի այլ բան՝ տևականություն կամ շարունակականություն, որ արտահայտվում է օժանդակ բայով. կարդացել եմ նշանակում է կարդալու գործողությունը ավարտած վիճակում եմ, այդպես էլ՝ կարդացել էի, կարդում եմ և այլն, մինչդեռ կարդացի ցույց է տալիս պարզապես ավարտած գործողություն անցյալում, առանց տևականության հատկանիշի: Ըստ այսմ, բաղադրյալ ձևերը արտահայտում են տևականություն կամ շարունակականություն, իսկ անցյալ կատարյալը՝ պարզապես գործողություն, և դրան համապատասխան էլ կկոչենք պարզ կերպ, ընդունելով Մ. Աբեղյանի անվանումը: Բաղադրյալ ձևերի այդ շարունակականությունը, որպես վիճակ, պայմանավորված է օժանդակ բայի կերպով. ինչպես գիտենք, օժանդակ բայի ներկան և անկատարը (եմ, էի) շարունակական կերպ ունեն: Դրա հետևանքով բուն գործողությունը, ինչպիսի կերպով էլ արտահայտված լինի, վերագրվում է գործողին որպես որոշ ժամանակի՝ ներկայի կամ անցյալի շարունակական հարաբերություն. այսպես՝ գրելու եմ նշանակում է «ես այժմ ունեմ գրելու գործողությունը որպես կատարելի գործողություն», գրել եմ նշանակում է «գրելու գործողությունն ավարտած վիճակում եմ» և այլն: Ըստ այսմ, բաղադրյալ ձևերի մեջ ունենք բաղադրիչների (դերբայի և օժանդակ բայի) կերպային զուգադրություն կամ հակադրություն. գրում եմ, գրում էի ձևերում երկու բաղադրիչներն էլ ունեն շարունակական (կամ անկատար) կերպ, ուստի առկա է կերպի զուգադրություն, մինչդեռ գնացել եմ, գնացել էի, գնալու եմ, գնալու էի ձևերի առաջին զույգում ունենք կատարյալ-անկատար, երկրորդում՝ կատարելի-անկատար կերպերի հակադրություն»²:

Այս մեջբերումներից պարզ երևում է, որ հեղինակը գործողության ընթացքը և կերպը նույնացնում է, մի բան, որ անհնար է, քանի որ կերպը՝ որպես քերականական կարգ, ինչպես այս կարգն ունեցող լեզուների համար է արձանագրված, ունենում է երկու դրսևորում՝ անավարտ (անկատար) և ավարտուն (ավարտված, կատարյալ), և չի նույնանում գործընթացի հետ: Թերևս սա է պատճառը, որ Գ. Ջահուկյանն այս առիթով նշում է, որ Է. Ադա-

¹ Տե՛ս **Ադայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 345-346:

² Նույն տեղում, էջ 369-370:

յանի՝ կերպի ընկալումը չի համընկնում լեզվաբանության մեջ ընդունված ըմբռնմանը¹:

Սակայն, այնուամենայնիվ, Է. Աղայանն իր նշած կերպային հակադրություն կազմող անկատար, վաղակատար և ապառնի գումարած ԷՄ և ԷԻ կառույցներին վերագրում է կերպերի ու տվյալ ժամանակի այնպիսի հարաբերություն, որ ոչ մի կերպ հնարավոր չէ հասկանալ, մանավանդ երբ կերպին վերագրում է նաև շարունակականություն, իսկ ԷՄ-ին և ԷԻ-ին՝ շարունակական կերպ, այսինքն՝ ընթացականություն: Արդյոք հնարավոր է հասկանալ վերոհիշյալ բացատրությունը, թե իբր մեկը կարող է այժմ ունենալ գործողություն, այն էլ՝ կատարելի: Ինչպե՞ս կարող է մարդ գործողություն ունենալ, մանավանդ՝ այժմ, երբ գրելու ԷՄ նշանակում է, որ խոսողն անհրաժեշտաբար կատարելու է տվյալ գործողությունը: Կամ՝ ինչպե՞ս կարող է գրելու գործողությունը ավարտած վիճակում լինել, երբ գրել ԷՄ նշանակում է, որ խոսողը պարզապես կատարել, ավարտել է տվյալ գործողությունը և ոչ մի վիճակում էլ չէ:

Կարծում ենք՝ այս վերլուծականներից կարելի է եզրակացնել, թե ինչու է անցյալ կատարյալը դուրս մնում կերպային հակադրությունից և կոչվում «պարզ», որ կերպի քերականական կարգի համակարգում այն գոյություն չունի, և որ կերպերի զուգադրություն և հակադրություն էական բայի համադրությամբ ընդհանրապես չեն կարող լինել:

«Կախյալ դերբայ» բառակապակցությունը՝ որպես տերմին, ինքնին անհասկանալի է այն պարզ պատճառով, որ «կախյալ» նշանակում է էական բայից կախման մեջ գտնվող, որն իր հերթին ակնարկում է առանց վերջինիս գոյություն չունենալը: Իսկ եթե այդպես է, այդ դեպքում ի՞նչ է նշանակում «դերբայ» բնորոշումը, որը ենթադրում է անդեմ լինելը: Բացի այդ՝ այս կառույցներում «դերբայ» կոչեցյալը, հասկանալի է, ինքնուրույն գոյություն ունեցող բառային անկախ միավոր չէ. գրական արևելահայերենում առանց ԷՄ-ի ո՛չ տեսնում, տեսել կա, ո՛չ էլ կարողում, կարողացել: Եվ չի էլ կարող լինել, քանի որ առաջինները բայանվան հոլովածն են, իսկ մյուսները՝ -եալ-ի հնչյունափոխված տարբերակներ և այդ իսկ պատճառով էլ ինքնուրույն անգործածելի: Սրանց բայ-բառ դարձնողը ԷՄ-ն է, որն ինքնին բառ է:

Այստեղից կարելի է հետևություն անել, որ այս կառույցների բաղադրիչներն առանձին-առանձին դիտարկել և որպես ինքնուրույն միավորներ ներկայացնել, դրանց միջև հարաբերակցություն սահմանել անհնար է, ուստի և միանգամայն համոզիչ է Գ. Ջահուկյանի և Ռ. Իշխանյանի որդեգրած սկզբունքը, ըստ որի այստեղ գործ ունենք հիմք և վերջավորություն կոույցի

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի անդեմ բայածները («դերբայները») // Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 59:

հետ¹: Սակայն նման ճշմարիտ սկզբունք որդեգրելուց հետո դերբայական առանձին բաղադրիչ ընդունելը պարզապես անհասկանալի է, քանի որ կառույցի ոչ ինքնուրույն մասը նորից համարվում է ինքնուրույն և հարաբերակցվում այսպես կոչված օժանդակ բայի հետ, որը ոչ մի «օժանդակ» էլ չէ, քանի որ դիմաթվածամանակային, եղանակային ծանրաբեռնվածություն ունի և բառ դարձնող էական բայ-վերջավորություն է:

Ծագումով պայմանավորված տեսնում, կարդում բայանվան հոլովաձևերը բնականաբար ներկայանում են տեսնելում, կարդալում հնչյունափոխված տարբերակները, այսինքն՝ տեսնելու, կարդալու ընթացքի մեջ լինելը, ուստի և էլ-ի հետ կազմում են սահմանականի ներկա, իսկ էի-ի հետ՝ սահմանականի՝ ընթացքի մեջ գտնվող անավարտ անցյալ:

Վաղակատարի բայաձևերի մասին կարելի է ասել հետևյալը: Հայտնի է, որ գրաբարում պերֆեկտ-ի իմաստով վաղակատար չի եղել², և այն ձևավորվել է, երբ էալ-ը հնչյունափոխվել և վերածվել է էլ-ի: Սա նշանակում է, որ գրաբարյան էալ-ով կազմությունները վաղակատարի իմաստ չունեն, ուրիշ բառեր են: Ա. Աբրահամյանը Ա. Բագրատունու «Հայերեն քերականությունիս ի պէտս զարգացելոց» աշխատությունից հետևյալ մեջբերումն է անում. «Եւ են դերբայք երեք, որ ըստ անուանն փոխանակ բայի դնին: Ղերբայ անորիչ կամ անսահման ժամանակաւ և եղանակաւ և դիմաւ, որ ընդ ամենայն ժամանակա և եղանակա և դէմս յարմարի ըստ տեղոյն. լինել, գնալ, սիրել, սիրիլ, քաղցնուլ. – Ղերբայ անցեալ, որ զեղեալ և զանցեալ ինչ ցուցանէ. լեալ, գնացեալ, սիրեցեալ, քաղցեալ. – Ղերբայ ապառնի, որ զլինելի և զառնելի ինչ ցուցանէ. լինելոց, գնալոց, սիրելոց, քաղցնլոց»³:

Մեջբերումից երևում է, որ բայանունները՝ էալ-ով և ոց-ով բառերը փոխարինում են դիմավոր բայերին, դրանց դերն են կատարում, ուստի և դերբայ են համարվում այնքանով ու այնպես, ինչպես անվան դեր կատարողները՝ դերանունները, բայց փոխարինելու հետևանքով դրանք բայ չեն դառնում, ինչպես որ դերանունը անուն չի դառնում:

Ա. Աբրահամյանը էալ-ով և էական բայով կազմություններն անվանում է «վաղակատար-հարակատար»⁴: Արդ, եթե հաշվի առնենք այն, որ գրաբարը պերֆեկտ չի ունեցել, ապա էալ-ով կազմությունները վաղակատար չեն, քանի դեռ էլ-ի չեն վերածվել: Պերֆեկտը նշանակում է վաղուց կատարված, ավարտված գործողություն, իսկ ած-ով բառերը՝ այսպես կոչված հարակա-

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 281: **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, էջ 125-133:

² Տե՛ս **Պետրոսյան Հր.**, Հայերենի բայի ձևակազմության մի քանի հարցեր // «ԲԵՀ», 1984, թիվ 2, էջ 107:

³ **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 29:

⁴ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 212:

տարը, ընթացք չեն ենթադրում, այլ՝ ավարտված գործողության հետևանք, արդյունք, վիճակ: Այդ դեպքում ինչպե՞ս կարող է այն լինել վաղակատար-հարակատար, այսինքն՝ գործողություն-վիճակ, կամ այլ կերպ՝ ընթացք-անշարժություն, դինամիկա և ստատիկա միաժամանակ:

Կարող ենք եզրակացնել, որ -եալ-ով կազմված բառերը վաղակատար ժամանակ (պերֆեկտ) չեն կարող կազմել, քանի որ ածական են, ինչպես որ արձանագրված է «Առձեռն բառարանում»¹: Այստեղ -եալ-ով կազմված բառերի դիմաց կա նշում՝ ա., այսինքն՝ ածական:

Թերևս սրանով է բացատրվում այն, որ -եալ գումարած եմ-ի առաջին ապառնիով կազմությունները միայն -ած-ով են թարգմանվում. սիրեալ իցեմ նշանակում է սիրած կամ սիրված լինեմ, կլինեմ, պիտի լինեմ, իսկ վաղակատարով անհնար է:

Ա. Աբրահամյանը մի կարևոր դիտարկում ունի. «Գրաբարում անցյալ դերբայով և լինել բայով բաղադրյալ դիմավոր ձևեր կազմվում են բոլոր սեռերի բայերից: Սովորական է կրավորական սեռը այն բայերի կամ այնպիսի դիմավոր ձևերի համար, որոնք ընդհանրապես կրավորական սեռի համար առանձին ձև չունեն: Սրանցից պակաս գործածություն ունեն չեզոք սեռի բայերը, իսկ ավելի պակաս՝ ներգործականները: Պետք է նշել նաև, որ այսպիսի դիմավոր ձևերում արտահայտվում է գործողության վիճակի յուրահատկություն, այնպես որ արգելեալ լինիմ կարող է նշանակել ոչ միայն արգելվում եմ, այլև՝ արգելած եմ լինում, արգելված եմ լինում»²:

Այնուհետև Ա. Աբրահամյանը բերում է նաև ունել-ով և կալ-ով կազմություններ և թարգմանում հիմնականում նորից -ած-ով. նշանակեալ ունին = նշանակած ունեն, նշանակել են, կայր պապանձեալ = մնում էր պապանձված, պապանձված էր, պահեալ կան = պահված են, կախեալ կան = կախված են և այլն³:

Այնուամենայնիվ, ինչո՞ւ է «վաղակատար» և «հարակատար» միաժամանակ: Հայտնի է, որ երբ -եալ-ը -ել-ի է վերածվում, և բառը դառնում է ոչ բառ, բայց էական բայի շնորհիվ խոնարհման հարացույցում է տեղ գտնում, գրաբարում քիչ տարածում ունեցող, իսկ հաջորդ փուլում գնալով ծավալվող -ուած, -ած-ով բառերը լրացնում են առաջացած բացը: Արդյունքը լինում է այն, որ նոր փուլում տարածվում է -ած-ով բայածականը, այլ հորջորջամբ՝ հարակատարը: Սա նշանակում է, որ -եալ-ը և -ած-ը հավասարազոր են, այն է՝ մատնանշում են հատկանիշ և ոչ թե գործողություն. հակառակ դեպքում միմյանց չէին փոխարինի: Ուստի միանգամայն ընդունելի են հետևյալ թարգմանությունները՝ «... լցեալ էին շտեմարանք – լցված էին, խոտորեալ իցեմք –

¹ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Անթիլիաս, 1988:

² **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, էջ 223:

³ Տե՛ս նույն տեղում:

խոտորված իննենք - ենք» և այլն, որ ներկայացնում է Ա. Աբրահամյանը¹:

Այսպես դատելու դեպքում սիրեալ է իմ արտահայտությունը մեկնաբանելիս պարզ կդառնա, որ գործ ունենք ոչ թե թեք հոլովով ենթակա և վաղակատարով պարզ ստորոգյալ կառուցվածքի, այլ հենց հայերենին հատուկ իմ սիրածն է նախադասության հետ: Բանն այն է, որ հայերենին երբեք հատուկ չի եղել թեք հոլովով ենթական, քանի որ նումինատիվ կառուցվածքի լեզու է: Վաղակատարով չթարգմանելու դեպքում ամեն ինչ պարզ է դառնում, և ունենում ենք ոչ թե «իմ սիրածը կա, իմ սիրածը գոյություն ունի»², այլ այն տարբերակը, որն առաջարկեցինք:

«Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» արժեքավոր աշխատության մեջ Ա. Աբրահամյանն անդրադառնում է Ա. Բագրատունու այն տեսակետին, ըստ որի գրաբարյան ոց-ը, ւի-ն և ույ-ը անորոշ դերբայի վերջավորություններ են: Սակայն առարկում է նրան՝ ասելով, որ դրանք կազմում են ապառնի դերբայ³:

Ա. Աբրահամյանը համարում է, որ Հր. Աճառյանն էլ է սխալվում, երբ ասում է, թե ապառնի դերբայը անորոշ դերբայի սեռական հոլովից է ծագել⁴, և ավելացնում է. «Բայց ինչպե՞ս կարող է սեռական հոլովը ապառնի դերբայ դառնալ: Հայերենում, ինչպես և բոլոր լեզուներում, սեռական հոլովը հիմնականում արտահայտում է պատկանելություն, վերաբերություն: Օրինակ՝ գրքի թերթ, մարդու հագուստ, քաղաքի շենք: Այս կապակցությունների մեջ գրքի, մարդու, քաղաքի բառաձևերը դրված են սեռական հոլովով և ցույց են տալիս թերթ, հագուստ, շենք գոյականների պատկանելությունը: Այժմ գրքի, մարդու, քաղաքի ձևերի փոխարեն վերցնենք բայեր, դիցուք՝ գրելու թերթ, կարելու հագուստ, կառուցելու շենք: Այստեղ արդեն պատկանելու գաղափարն արտահայտվում է այլ կերպ: Այստեղ առարկային չի պատկանում մի ուրիշ առարկա, այլ գործողությանը՝ առարկա: Գրելու, կարելու, կառուցելու սեռական հոլովաձևերը ցույց են տալիս, որ գրելու, կարելու, կառուցելու գործողությունները կատարվելու են թերթ, հագուստ, շենք գոյականների նկատմամբ, այսինքն թերթը ենթակա է գրվելու, հագուստը կարվելու է, շենքը կառուցվելու է: Այսպիսով՝ անորոշ դերբայի սեռական հոլովն արտահայտում է ապագայում կատարելիք գործողություն: Իսկ ինչպե՞ս է առաջ գալիս ապառնի դերբայի իմաստը՝ կատարելի գործողության կամ եղելության վիճակի գաղափարը: Հոլովումը հատուկ է անուններին և ոչ թե բայերին: Եթե այդ այդպես է, ուրեմն գոյական անվան սեռական հոլովը չի կարող արտահայտել ապառնիության հարաբերություն իրեն պատկանող կամ վե-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 211:

² Տե՛ս նույն տեղում, էջ 217:

³ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 150:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 154:

րաբերող առարկաների նկատմամբ, իսկ երբ բայի դերբայական ձևը (տվյալ դեպքում անորոշ դերբայը) դրվում է սեռական հոլովով, այն իրեն պատկանող կամ վերաբերող առարկայի կամ առարկաների նկատմամբ ունենում է ոչ թե գերակշռող տարածական հարաբերություն, այլ վիճակային հարաբերություն, տվյալ դեպքում գործողության կամ եղելության կատարելի վիճակային հարաբերություն: ... Ապառնի դերբայի՝ անորոշ դերբայի սեռական հոլովից առաջացած լինելը վկայում է քերականական իրողության յուրահատկության մասին և միաժամանակ ցույց է տալիս հայերենի հոլովման և խոնարհման կապը»¹:

Նախ ասենք, որ սեռական հոլովով դրված գոյականը կարող է ոչ միայն պատկանելության իմաստը արտահայտել, այլ նաև որակի. օրինակ՝ ապրի ծաղիկ նշանակում է ոչ թե սարին պատկանող ծաղիկ, այլ՝ սարում աճած ծաղիկ, ուստի և պատասխանում է ոչ թե ինչի՞, այլ ինչպիսի՞ հարցին: Երկրորդ՝ «անորոշ դերբայ» կոչեցյալը բայանուն է, գործողության անուն և հոլովված է ու այդ դեպքում գոյականի հետ գործածվելիս հատկանիշ է մատնանշում և ոչ թե գործողությանը պատկանող առարկա, որ անհնար է. այսինքն՝ կարելու հագուստ՝ ինչպիսի՞ հագուստ: Երրորդ՝ սեռական հոլովով դրված «անորոշ դերբայ» կոչեցյալը՝ բայանունը, չի կարող ենթադրել իրեն պատկանող կամ վերաբերող առարկա ու վերջինիս հետ ունենալ վիճակային հարաբերություն, այն էլ՝ գործողության կամ եղելության կատարելի վիճակի հարաբերություն: Բայանունը գործողության անուն է, ուստի և ոչ մի կերպ նրան որևէ առարկա պատկանել կամ վերաբերել չի կարող, որի հետ ունենա վիճակային հարաբերություն: Առհասարակ գործողությունը կարող է կատարվել կամ չկատարվել, իսկ գործողության կատարելի վիճակ չի կարող լինել, քանի որ անհնար է երևակայել շարժման կատարելի անշարժություն, ընթացքի կատարելի վիճակ, փոփոխության կատարելի կայունություն, դինամիկայի «կատարելի» ստատիկա:

Այստեղից կարող ենք եզրակացնել. բայանվան սեռական հոլովաձևը չի կարող այսպիսի անհասկանալի իմաստ ձեռք բերել և վերածվել այսպես կոչված «ապառնի դերբայի»: Եթե գրաբարում այսպես կոչված «ապառնի դերբայ» լիներ, մեր լեզվի զարգացման հաջորդ փուլերում ու նաև բարբառներում կգոյատևեր, մինչդեռ ինչպես որոշ բարբառներում ու խոսվածքներում (Թբիլիսիի, Լոռվա և այլն), այնպես էլ արևմտահայերենում սահմանականի ապառնին կազմվում է պիտի-ով ու ըղձականով կամ բայանվամբ:

Ա. Աբրահամյանը նշված մեծարժեք աշխատության մեջ քննում է մեր տարբեր բարբառներում զանազան ածանցներով կազմությունները, իհարկե դրանց վերագրում է հիշյալ դերբայի իմաստ, սակայն, մեր կարծիքով, դրանք հիմնականում ածականակերտ ածանցներ են: Դրանք են՝ -ացու, -ացուկ, -

¹ Նույն տեղում, էջ 154-155:

ական, -ան, -ացկան, -ասկան և այլն: Այս ածանցներով կազմություններն օգտագործվում են ն' որպես որոշիչ, և՛ որպես ստորոգելի, երբ հանդես են գալիս էական բայի հետ և արտահայտում անհրաժեշտության իմաստ:

Արդ, որ -ելու, -ալու-ով բառաձևերը գրական արևելահայերենում բայանվան սեռականի հոլովաձևեր են, այդ մասին են վկայում մեր հետևյալ վերլուծությունները: Մեր քերականագիտության մեջ ընդունված է այն տեսկետը, ըստ որի՝ -ելու, -ալու-ով կազմված բառաձևերը եմ-ի և էի-ի հետ կազմում են սահմանականի ապառնի և անցյալի ապառնի ժամանակային բառաձևերը:

Ա. Արբահամյանը նշում է, որ դեռ գրաբարում -ոց-ով, -ոյ-ով, -ի-ով տարբերակներն ունեցել են անպայման կատարվելիք, անհրաժեշտության, հորդորանքի ու հարկադրանքի իմաստներ¹: Սրանք սահմանական եղանակին հատուկ չեն, քանի որ ներկայացնում են ոչ չեզոք վերաբերմունք, որը հատուկ է միայն սահմանականին: Հիշյալ իմաստները պահպանվել են նաև այսօր. երգելու եմ, կարդալու եմ, երգելու էի, կարդալու էի հավասար են պիտի-ով և պետք է-ով կազմություններին. սահմանական չեն, չեզոք չեն, ստույգ չեն, անհրաժեշտական են, հարկադրական են²:

Սա մինևսյն ժամանակ հուշում է, որ -ելու, -ալու-ով բառաձևերը չեն կարող դիտարկվել տեսնում եմ, կարդում եմ և տեսնում էի, կարդում էի, տեսել էի, կարդացել էի մանրահամակարգում, քանի որ վերջիններս առանց եմ-ի, էի-ի չկան, իսկ մյուսները՝ կան, այսինքն՝ դրանք հավասար լեզվական միավորներ չեն. հիմքերը հակադրվում են բառին, ուստի տարասեռ միավորների՝ հասկացության և ոչ հասկացությունների հակադրությունից բխող եզրակացությունը կեղծ է լինում, չի համապատասխանում իրականությանը: Ասում են՝ երբ տեսնելու, կարդալու առանց էական բայի է, հոլովաձև է, իսկ երբ էական բայի հետ է հանդես գալիս, հոլովաձևի -ու-ն ուրիշ ու է դառնում:

Ոչ ոք չի ժխտում, որ ձուկը ուտելու է, այսինքն՝ ուտելու համար պիտանի է-ից է առաջացել և՛ ձուկը ուտելու է նախադասությունը: Այդ դեպքում հետո ինչպե՞ս է վերջավորության ու-ից ապառնիի ու-ն առաջացել, և ուտելու է-ն առանձին ինչո՞ւ հնարավոր չէ քերականորեն բնորոշել: Իսկ ինչո՞ւ չի կարող նույն բառաձևը մի դեպքում որպես որոշիչ օգտագործվել, մյուս դեպքում՝ ստորոգելի, մանավանդ որ վերոնշյալ պատճառներով սահմանականի բառաձև ոչ մի կերպ չի կարող լինել:

Պ. Պողոսյանը «Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում» աշխատության մեջ այսպիսի դատողություններ է անում. «Անցյալ դարում սահմանական ապառնին կիրառվում էր նաև անհրաժեշտական եղանակի ապառնիի փոխարեն և արտահայտում էր անհրաժեշտու-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 132-134:

² Տե՛ս **Ներսիսյան Բ., Ավետիսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 209-223:

թուն. սակայն այժմ այդ ֆունկցիան նրանից լիովին իրեն է սեփականել անհրաժեշտության եղանակի ապառնին: Այդ է պատճառը, որ սահմանական եղանակի ապառնին անհրաժեշտության եղանակի ապառնիի փոխարեն կիրառված մենք հանդիպում ենք միայն անցյալ դարի հեղինակների մոտ: Ինչպես՝ Այդ անպիտանին սպանելու է ... շան նման սատկացնելու է, Բայց այժմ մեր տիկնոջ մասին մտածելու է: Քանի որ Ռշտունյաց տիկինը թշնամու ձեռքումն է, Ռշտունիքը կմնա անպատվության մեջ, Պնդում էր, որ բարձրանալու համար ռտնատակ տալու է ամենայն նվիրվածություն..., Ողորմած թագուհի, ես մեղավոր եմ, որ խիստ հսկողություն չեմ ունեցել, բայց մի այսպիսի բան իմանալու համար քո իմաստությունն ունենալու է¹:

Արդ, սրանք քերականական ի՞նչ երևույթ են իրենցից ներկայացնում: Այն, որ հեղինակի կարծիքով սրանք ապառնի ժամանակ են ներկայացնում, կասկածից վեր է: Միննույն ժամանակ կասկածից վեր է նաև այն, որ սրանք պատմական զարգացման ընթացք են ներկայացնում: Հեղինակը համոզված է, որ գործ ունի այսպես կոչված ապառնի դերբայով կազմությունների հետ, մինչդեռ արդյո՞ք սրանք բայանվան հոլովական ձևով կազմություններ չեն և իրո՞ք զարգացման ընթացք չեն ներկայացնում: Այդ դեպքում ո՞ր տրամաբանությամբ են դրանք վերածվում այլ հասկացության՝ ապառնի դերբայի, մանավանդ որ և՛ այս կառույցներում, և՛ հետագայում՝ այսօր, պահպանում են անհրաժեշտության քերականական իմաստը, որը սահմանական չէ:

Սա է պատճառը, որ Գ. Ջահուկյանը -ել-ու, -ալ-ու-ով բառաձևերը -ոււ-ով և -ել-ով ձևերին համարժեք չի համարում, քանի որ -ել-ու-ով, -ալ-ու-ով կազմվածները ինքնուրույն բառեր են²: Սակայն հետագայում իր մի հոդվածում Գ. Ջահուկյանը, կ(ը)-ով բառաձևերի ապառնին իրավացիորեն սահմանականի հարացույցում տեղադրելով հանդերձ, -ել-ու, -ալ-ու-ով կազմվածները նույնպես համարում է սահմանականի բառաձևեր³: Ի՞նչն է պատճառը: Բանն այն է, որ Գ. Ջահուկյանը ժամանակի քերականական կարգը քննելիս ներմուծում է հաջորդականության և տիպարի կարգերը:

Հաջորդականության քերականական կարգին մենք մանրամասն անդրադարձել ենք մեր հոդվածում⁴, այստեղ նշենք հետևյալը:

Գ. Ջահուկյանն ըստ հաջորդականության կարգի միմյանց հակադրում է գնալիս, գնացած, գնալու բառերը որպես բայափոխաբան («դերբայական») կազմիչներ և ասում, որ «... սրանք ժամանակային տարբերությունները ար-

¹ Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 75-76:

² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 280-287:

³ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Արդի գրական հայերենի ժամանակների համակարգը // Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, Բեյրութ, 2000, էջ 80:

⁴ Տե՛ս **Ներսիսյան Բ.**, Հաջորդականության քերականական կարգը ժամանակից արևելահայերենում // Արդի հայերենի հիմնախնդիրներ, Երևան, 2016, էջ 127-141:

տահայտում են որպես որոշ վիճակներ, ուստի այդ ձևերն ունեն ժամանակատիպարային արժեքներ»¹:

Նախ՝ սրանք բայահիմքեր չեն, քանի որ առանձին, ինքնուրույն բառեր են, իսկ հենց ինքը՝ Գ. Ջահուկյանը, հիմքեր է անվանում էական բայից՝ դիմաթվաժամանակային վերջավորությունից, առաջ ընկած մասերը, որոնք առանձին, ինքնուրույն գործածություն չունեն, քանի որ բառեր չեն: Երկրորդ հակադրում է բառեր, որոնք հենց ըստ Գ. Ջահուկյանի գործառական ածանցներով կազմություններ են², առանձին բառեր են, որոնք ըստ հաջորդականության քերականական կարգի միմյանց հակադրվել չեն կարող: Երրորդ ժամանակային տարբերությունները կարող են արտահայտվել դիմաթվաժամանակային, եղանակային բայաձևերում և ոչ մի կերպ չեն կարող վիճակ ներկայացնել, քանի որ գործընթացը և վիճակը անհամատեղելի երևույթներ են:

Մի կարևոր հանգամանք նույնպես. Գ. Ջահուկյանը պարզ և բաղադրյալ ձևերի իմաստային հակադրությունը ներկայացնում է երկու կարևոր հատկանիշներով ևս: Դրանք են՝ ըստ հարաբերման պահի և հաջորդականության: Բայց այս երկու հատկանիշներն էլ սահմանականի համակարգում չեն վեր հանում բառաձևերի իրական քերականական իմաստները հետևյալ պատճառներով: Առաջին՝ այսպես կոչված «բացարձակ» և «հարաբերական» բայաձևեր առանձնացնելիս ներկայի և անցյալի ինչ-որ պահերի հետ, որոնք արտահայտում են էական բայի ներկայի և անցյալի խոնարհված ձևերով, հարաբերվում են մի դեպքում բառեր՝ նստած, նստելու, մյուս դեպքում՝ հիմքեր՝ տեսնում, տեսել: Երկրորդ՝ էական բայի հետ հարաբերությունն արձանագրելու դեպքում անհասկանալի է դառնում հիմքի և վերջավորության փոխհարաբերությունը, իսկ ոչ բայահիմքով՝ ինքնուրույն բառով կազմությունը՝ կարդալու էր, մեկնաբանվում է որպես անցյալի ապառնի, որը անբացատրելի բնութագրություն է: Երրորդ՝ համակարգի առանձին, ինքնուրույն անդամները առանց միմյանց հակադրելու, բնութագրվում են «համընկնում, նախորդում, հաջորդում» հատկանիշներով, որ անհասկանալի է:

Այսպես կոչված «երկրորդական բաղադրյալ ժամանակների» մասին խոսելիս Գ. Ջահուկյանն ասում է, որ դրանք ներկայացնում է միակատարի ու բազմակատարի սկզբունքով՝ ի նկատի առնելով ունեմ-ունենում եմ-ի տարբերությունը: Հետաքրքիրն այն է, որ հեղինակը նշում է, թե սրանք կարելի է դիտարկել անկախաբար, այսինքն՝ որպես առանձին, ինքնուրույն բառեր, բայց, չգիտես ինչու, այնուամենայնիվ այդպես չի անում և «երկորդական բաղադրյալ» կոչեցյալները համարում է բազմակատարի դրսևորումներ, մի բան, որ հազիվ թե համապատասխանի իրականությանը:

¹ **Ջահուկյան Գ.**, Արդի գրական հայերենի ժամանակների համակարգը, էջ 84:

² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի անդեմ բայաձևերը («դերբայները»), էջ 57-74:

Ինչ վերաբերում է այսպես կոչված «երկրորդական բաղադրյալ ժամանակներում» -ել-ու, -ալ-ու-ով բառերին, ապա, ինչպես տեսանք, մեր ըմբռնմանը համահունչ է Ա. Մարգարյանի տեսակետը¹, ըստ որի՝ դրանք ոչ թե «ապառնի» կոչեցյալ դերբայ են, այլ՝ հոլոված:

Կարող ենք եզրակացնել, որ սահմանականի «բաղադրյալ» կոչվող կազմությունները իրականում հիմք և վերջավորություն են, ապառնին կ(ը)-ով բառածներն են ներկայացնում, -ելիս-ով, -ալիս-ով, -ած-ով և -ել-ու-ով, -ալ-ու-ով կազմությունները բաղադրյալ ստորոգյալներ են:

Այսպիսով, սահմանական եղանակի ժամանակները, ըստ մեզ, ներկայացնում են հետևյալ համակարգը՝ համապատասխան քերականական իմաստներով. գրում եմ, կարդում եմ՝ ներկա, գրում էի, կարդում էի – անավարտ անցյալ, գրել եմ, կարդացել եմ – վաղակատար, գրել էի, կարդացել էի – նախորդող վաղակատար, կգրեմ, կկարդամ՝ ապառնի, կգրեի, կկարդայի – անկատար (գործողությունը տեղի չի ունեցել՝ չկատարված), գրեցի, կարդացի – անցյալ կատարյալ:

Ըղձականն ունի՝ գրեմ, կարդամ՝ ապառնի և գրեի, կարդայի – անկատար (իդը չի կատարվել՝ չկատարված):

Համապատասխան ժխտականների քերականական իմաստներն են՝ չեմ գրում, չեմ կարդում՝ ժխտական ներկա, չէի գրում, չէի կարդում – ժխտական անավարտ անցյալ, չեմ գրել, չեմ կարդացել – ժխտական վաղակատար (վաղուց չկատարված գործողություն), չէի գրել, չէի կարդացել – ժխտական նախորդող վաղակատար (անցյալ գործողությունից առաջ չկատարված գործողություն), չեմ գրի, չեմ կարդա – ժխտական ապառնի, չէի գրի, չէի կարդա – կատարյալ (կատարված գործողություն, այսինքն՝ գրեցի, կարդացի), չգրեցի, չկարդացի – ժխտական անցյալ կատարյալ (չնայած պետք է կոչվի անցյալ չկատարված, անկատար և ոչ թե կատարյալի, կատարվածի ժխտական):

Ըղձական՝ չգրեմ, չկարդամ՝ ժխտական ապառնի, չգրեի, չկարդայի – կատարյալ (երազել եմ չգրել, չկարդալ, բայց գրեցի, կարդացի):

Հստակ երևում է, որ ունենք դրական բայածներով ժխտականի քերականական իմաստ, և՛ հակառակը:

Հրամայականի ժամանակի կարգի մասին կարելի է ասել, որ այն միանշանակ ապառնի չէ, այլ ներկայի և ապառնիի սահմանագծին է, քանի որ հրամանը, հորդորը, խնդրանքը տեղի են ունենում խոսելու պահին, իսկ դրանից հետո դիմացինը այն կկատարի, գործողությունը տեղի կունենա, թե չէ, հայտնի չէ: Արգելականի դեպքում՝ հակառակը:

¹ Տե՛ս **Մարգարյան Ա.**, Ապակատար և անորոշ սեռական-տրական դերբայների շարահյուսական գործառնությունները արևելահայ և արևմտահայ գրական տարբերակներում // «ԲԵՀ», 1996, թիվ 3, էջ 186-190:

**Баграт Нерсесян – Грамматическая категория времени в литературном
восточноармянском языке**

По нашему мнению, в системе спряжения литературного восточноармянского языка, точнее в парадигме изъявительного наклонения, существует необходимость некоторых уточнений. В частности, имеются в виду конструкции с $-ել-ու$, $-ալ-ու$, $-ել$, $-աց-ել$, $-ած$, $-աց-ած$ и $լ(ը)$. Анализируя конструкции с $-ել-ու$, $-ալ-ու$ с исторической, а также грамматико-семантической точек зрения, мы приходим к выводу, что это формы родительного падежа инфинитива, их конструкции с $եմ$, $ի$ имеют грамматические значения принудительности, необходимости, которые не свойственны изъявительному наклонению и потому не могут находиться в этой парадигме. На самом деле будущее время в этой парадигме – это глагольные формы с $լ(ը)$. Исходя из вышеуказанных принципов, мы анализируем также конструкции с $-ել$, $-աց-ել$ и $-ած$, $-աց-ած$ и приходим к выводу, что исходящие из суффикса окончания $-եալ$ $-ել$ и $-աց-ել$ формируют перфект изъявительного наклонения с глаголом бытия $-եմ$. С $-ի$ формируется плюсквамперфект, т.е. перфект предшествования, а конструкции с суффиксами $-ած$, $-աց-ած$, исторически возникшие вместо $-եալ$, не входят в эту парадигму, так как являются отглагольными прилагательными и не имеют грамматического значения действия. Исходным принципом вышеуказанного анализа является то, что упомянутые аналитические конструкции представляют собой не причастие или деепричастие плюс вспомогательный глагол, а основу плюс глагольные окончания в виде $եմ$, $ի$.

Bagrat Nersesyan – The Grammatical Category of Tense in Literarily Eastern Armenian

In our opinion the conjugation system of literarily eastern Armenian, more precisely, the paradigm of the indicative, requires some specification. Particularly, it refers to the constructions with $-ել-ու$, $-ալ-ու$, $-ել$, $-աց-ել$, $-ած$, $-աց-ած$ and $լ(ը)$. Analyzing the constructions with $-ել-ու$, $-ալ-ու$ according to their historical development and the principles of the semantics of grammar, we come to a conclusion that those are forms of the genitive case of the Infinitive, and in combination with $եմ$, $ի$ have the grammatical meaning of coercion, necessity, which is not typical to the indicative, consequently cannot be included in this paradigm. Actually, only the verbal forms with $լ(ը)$ have the meaning of the future tense of the indicative. Following the above mentioned principles, we examine the forms with $-ել$, $-աց-ել$, $-ած$, $-աց-ած$ and come to a conclusion that the derivative verbal forms of $-ել$, $-աց-ել$ (from the suffix $-եալ$) form the perfect of the indicative by means of the form *being* $-եմ$. With the help of $-ի$ the Pluscuamperfect is formed, that is, the perfect of antecedence, and the suffix constructions with $-ած$, $-աց-ած$ historically coming to substitute $-եալ$, do not pertain to this paradigm, because they don't have the grammatical meaning of action. The above mentioned analyses are based on the primary principle that the foregoing analytic constructions do not constitute a participle plus an auxiliary verb, but a stem plus verbal endings $-եմ$, $-ի$.